



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Դ. — ՇՐՋԱՆ ԻԱ. 1889

ՏԱՐԻ ԻԲ. ԱՊՐԵԼ 30

ԿՐՕՆԱԿԱՆ



ԾԱՐԴՈՅ ՏՈՒԱԾ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՈՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԸ.

Լաւ է Տիրոջ յուսալ, քան թէ մարդոց ապաւինիլ (Սաղմ. ԺԱ. 8).

Եթէ որ գլխիդ գալիքի թուրը կպել է քեզ ու սիրող ստացած վէրքից այրուում է, ցաւդ մեղմացնող բալասանի յոյս չունենաս մարդոց բարեհոգութիւնից ու բարերարութիւնից: Մինչև անգամ ուրիշների նեղ օրին հասած, լաւութիւն էլ արած լինիս, իմացիր, որ քո բարերարութեանդ համար շատ անգամ շնորհակալութիւն չես ստանալ, այլ արած լաւութեանդ տեղը՝ վատութիւն կտեսնես, ինչու որ մարդոց բարե-

կամութիւնն եղէգնի է նման, որ քամուց դէս ու դէն է տատանուում:

Միայն մէկը կայ, որ անչափ գլխով մեզ իւր սիրոյ գրկէ մէջ գգուում է, որ աներեւոյթ կերպով իւր հիւանդ զաւակին հոյրական ձեռքերի մէջն իսկական հաւատարմութեամբ խնամք է տանում, նա մեզ տխրութեան մէջ է քցում, որ մեր սիրան իրան միայն հաւատայ ու յանձնուի բոլորովին, և ուզում է մեզ մոտ զիշերից տանել դէպի վեր, դէպի արեգական յաւիտեանական պայծառութիւնը:

Մի ազնիւ ծերունի, որ մեծ պատուի է տիրացել իւր քաղաքակիցների մէջ, որ աշխարհի փառքովը մեծարուած է, սւժից ընկած, նստած իւր հիւանդութեան բազկաթոռի վրայ, ու մենք մօտենում ենք նրան, որ մի անգամ էլ՝ միզից բաժանվելուցն առաջ՝ մեր խորին յարգանաց հաւաստիքը նրան մատուցանենք: Մենք միտներս ենք բերում նրա գեղեցիկ կերպով անց կացրած կեանքի գործունէութիւնն. և երանի ենք տալի նրան, որ սակաւաթիւ մահկանացու մարդոց բաժին ընկած լիութիւն ընդունելութիւնն իւր ժամանակակիցներից արդէն ղգացել ու ստացել է: Բայց նա տխուր ժպիտով բարձրացնում է իւր զլուխը՝ դեղնած, քաշուած երեսովն ու ասում, «իմ պատուական բարեկամներ, մի խաբուէք ունեցած պատուիս վրայ, ինչու որ ես էլ այլ ևս չեմ խաբուում: Այս հաւանութիւնն, որ երբեմն գտել եմ մարդոց մէջ, կեանքիս մէջ ունեցած դուռը փորձառութիւններս չեն կարող քաղցրացնել: Ես մարդոց ճանաչել եմ և այժմ էլ գիտեմ թէ՛ ինչպէս, խաբուելով, հաւատալ կարելի չէ ոչ նրանց գովասանքին, ոչ էլ պարսաւանքին: Ով որ, յիրաւի, իմ լաւս էր ուզում, լաւս էր մտածում, իմ մանկական հասակի բարեբարներս էին, որ արդէն վաղուց հանգստանում են գերեզմանում. իսկ ով որ նրանցից յետոյ ինձ իրան բարեկամ է տնուանել, շատ ու շատ անգամ տեսել եմ, որ բարեկամ է՝ մնացել այնքան ժամանակ, քանի որ գեռ ինձ հետ ունեցած բարեկամութեամբը գոհ էր նրա համար, որ իւր սեպհական օգուտն էր մէջը գտնում: Որ-

չափ էլ անձնական փորձովս այսպէս եմ ճանաչել մարդոց, բայց և այնպէս, ես ոչ դէին չեմ ատում և ոչ մի իմ եղբայրակցի վրայ դատապարտութեան քար չեմ բարձրացնում որ քցեմ, ինչու որ հէնց ինքս էլ կատարեալ ու մաքուր չէի, բայց իմ հաստատ յոյսս դեռ ևս չեմ կտրել մի միայն իմ Աստուծոցս ու Փրկչիցս, Որին որ ապաւինել եմ: Նրան եմ միայն անփոփոխ կերպով հաւատարիմ գտել իմ բոլոր կեանքումս, և Նրան եմ միայն ապաւինում անխաբ յուսով իմ կեանքիս առաջիկայ վերջին ժամումս էլ:

Նոյն կերպով էր խօսում երեւմն լցուած սրտով Դաւիթ մարգարէն, այն շատ փորձուած, շատ անգամ ընկճուած թագաւոր մարդն, որ իւր օրերում տեսած և իմացածն՝ իբրև կեանքի փորձառութեան և իմաստութեան պտուղ՝ առաջ է քերում այն խօսքը թէ՛. «Լաւ է Տէրաջէլ իբայ յոյս դնել, քան թէ մարդոց ապաւինել»: Սիրիւր քո մարդկային եղբայրներիդ, օգնիր նրանց՝ և հարկաւոր ժամանակը՝ խորհուրդ տուր, նրանց բազմաւորութեան համար քեզ զոհիր, բայց նրանցից շատերից ոչ շնորհակալութիւն ստանալու յոյս ունեցիր, ոչ էլ օգնութիւն: Նրանցից շատերն ապրում են կատարեալ ինքնասիրութեամբ միայն իրանց համար, ամենայն բան, ինչ որ իրանցից դուրս է, միայն իբրև միջոց՝ իրանց նպատակին հասնելու համար՝ գործածել կցանկային: Եւ այս ինքնասիրութիւնն, ամենայն անսիրութեան մայրն է, որ քանի ու քանի դաւը փորձն առած մարդոց չէ թողնում հաւատալ ու յոյս ունենալ մարդոց վրայ, եւ որովհետեւ գրեթէ ամեն մի մարդ ապրում է միայն հենց իւր և իւր օգտին համար, ինչու որ գրեթէ՝ ոչ ոք ձեռք չէ բռնում, մի օգնութիւն, մի ծառայութիւն չէ անում ուրիշին՝ առանց ինքնասիրական նպատակներ հետն ունենալու, այս պատճառով ճշմարիտ բարեկամութիւնն աշխարհիս վրայ ամենասակաւագիւտ բանն է: Եթէ որ ուրիշներից բարձր ես, և փառքով ու պատուով մեծարած, եթէ որ աւելի զօրաւոր մարդ, կամ աւելի անուանի, կամ աւելի հարուստ, կամ աւելի հասկացող ու խելացի՝ քո ժամանակակիցներիդ մի մասն՝ իրանց նախանձելուցը՝ քեզ կառն,

միւս մասն՝ իրանց անձնտիրտկան օգտին համար՝ քեզ կմօտե-
նան, հաւատարիմ՝ ու հպատակ՝ կլինին: Իսկ եթէ ուրիշներ-
ըլ ցած ես ու հարուստ էլ չես, աշխարհս իրան իրաւունք կը
համարի քեզ վրայ արհամարհունքով մօտիկ տալու:

Մի թագաւոր, որ իւր աթոռից բնկնում է, իրան հպա-
տակ ուղղերն երեսի վրայ թողնում են, հեռանում: Մի իմաս-
տուն, որ իւր հայրենիքից աքսորուում է, իւր աշակերտներն,
սրչտփ կարելի է, իրանց հեռու են պահում նրանից, մի բարե-
րար, որ, անբաղդութեան պատահելով՝ աղքատանում է,
իրանից խնամք տեսած որդեգիրներն՝ իրան էլ չեն ճանաչում,
կարծես մոռացած լինին, որ նա իրանց պահեց, մեծացրեց,
մարդ շինեց: Ոչ թէ երախտագիտութիւնն, այլ մինչև անգամ
արեւտակցութեան կապերն էլ միշտ այնչափ ոյժ չունին և այն-
չափ պինդ չեն, որ կարողանան յաղթել մարդուս ինքնասիրու-
թեանն:

Ուրեմն՝ շատ մի հաւատար մարդոց խօսքին: Դու գիտես, որ
ոնհատտատութիւնը մահկանացու մարդոց բնութեան մէջ
կայ միշտ: Ոչ մի բան նրա մէջ կամ նրա չորս կողմը՝ միշտ միև-
նոյն կերպով չէ մնում: Նրա արտաքին հանգամանքները ու
յարաբերութիւնները, նրա ներքին համոզմունքները փոխուում
են, էլ էն չեն, իւր տարիքը փոխուում են իւր հակամիտու-
թիւնների, իւր հաճոյքների և իւր հառաւոր սիլլուսներին
նման: Մինչև անգամ իւր ձայնն, իւր կիրպարանքն էլ նոյնը չէ
մնում: Այսօրուայ մարդն՝ էլ անցեալ հարուստ մարդը չէ:
Այո՛, հէնց դու էլ, որ այգալէս դուռը սրտով զանգատուում ես՝
քեզ հետ կեանք անցկացնողների վրայ, տեսնենք մենակ դմ-
այն, ես ինչ որ երէկ էիր, Ուրիշ հանգամանքներն առաջ են բե-
րում ուրիշ միտք, ուրիշ զգացմունք, կեանքի ուրիշ գիրքն՝
ուրիշ պարտաւորութիւններ է բերում հետը. հասակն որ
փոխուում է, բնութիւնն էլ է փոխուում, ուրիշ հասակում՝
ուրիշ սրտի ու մտքի տէր ենք լինում: Սրանիցն է, որ իրանց
խօսքի վրայ հաստատ չեն մնում այնպիսի մարդիկ, որոնցից որ
ամենեւին չէինք կարծել, որ այգալիսի մի բան կարող են անել.
սրանիցն է, որ մանկութեան մէջ երդումով կապած քանի ու

քոնի բարեկամութիւն, որոյ մեր մահաւանից յետոյ էլ հաս-
տատ մնալուն պատրաստ կլինէինք մեր ունեցած չունեցա-
ծովն ու մեր արիւնիովն երաշխաւորել՝ անախուհեւի կերպով
կորուսում է: Շատ քիչ մարդիկ կան, որ ազնիւ կերպով մոա-
ծեն և բաւական անշահասէր լինին՝ ու բոլորովին քո գրու-
թեանդ, քո ունեցած կարիքներիդ ու ցանկութիւններիդ
մէջը մտնեն: Մեծ վստահութիւնովդ ու բոլորովին կուրօ-
րէն հաւատալովդ՝ քո չարն ու բարին, քո բաղդաւորութիւնդ
ու անբաղուութիւնդ երբէք չյանձնես մի մարդու ձեռքն: Այդ
մի մարդը միշտ առաջ իւր վրայ է մտածում. շատ ազնիւ հո-
գւոյ տէր պէտք է լինի, որ իւր անձն ու շահը մէկ կողմը թող-
նելով, ուրիշների համար մի փոքրիկ զոհաբերութիւն՝ ուրիշին
մի լաւութիւն անի, թէև այդ լինէ՛ր իւր ժամանակն ու աշ-
խատութիւնը մի փոքր գոնէ չխնայել ուրիշին մի բարիք անե-
լու համար: Ինչու որ այդպիսի ժամանակ նրբաւի հեշտ է մէկի
բանն ետ ձգելն, ուշացնելը՝ և այդպիսի մի խօսքով իրան ար-
դարացնելը թէ՛ «ժամանակ չունէի», Կամ աւելի անկարեկից
կերպով ասել թէ՛ «քո գործիդ չեմ խառնուիլ», քո բանդ դու
ես իմանում, ինչպէ՛ս գիտես, այնպէ՛ս արա՛ւ:

Բարեկամութիւնից ոչ մէկն այնչափ մօտիկ չէ մարդուս սրը-
տին՝ ինչպէ՛ս որ այն բարեկամութիւնն, որ բնութեան ձեռքն
ինքն է կապել ու հաստատել, ուղում եմ տոել այն քրքուշ
յարաբերութիւններն, որ լինում են ծնողաց ու զաւակաց մէջ,
կամ միմեանց հաւատարիմ ամուսինների մէջ: Ինչու որ՝ այս
տեղ մէկի օգուտներն ու վնասներն, պատիւն ու անպատու-
թիւնը՝ միանգամայն միևսի էլ օգուտն ու վնասն է կամ պա-
տիւն ու անպատուութիւնն: Այս պտտածաւով այս տեղ լիակա-
տար և ամենաանկեղծ հաւատարմութիւն պիտի թագաւորի՝
երկու կողմից էլ: Այս տեղ ամենքն էլ խորհրդապահ պիտի լի-
նէին, տան գաղտնիք դուրս չպիտի գար: Բոլոյ մինչև անգամ
այս տեղ էլ գոհաւոր կարելի է յոյսը դնել մարդոց օգնութեան
վրայ: Ոչ ոքի վրայ հաստատ հաշիւ մի անիլ, ինչու որ շատ
հեշտ է կարուում այն կապն, որ մարդս այս աշխարհումս ան-
քակաւելի էր համարում: Հիւանդութիւնն ու մահը կարող են

քո ձեռքիցը խլել քո ամենասիրելիներիդ, որոնց օգնութեանը վրայ յոյս ունէիր, աշխարհասիրութիւնով փչացած զաւակներդ կարող են քեզանից օտարանալ. մի զրպարտիչ կարող է քո շոտ տարուան մէջ փորձած հառտատ բարեկամիդ սիրտը քեզանից կտրել:

Մի յանձնուիր ուրիշ մարդու քեզ տուած խորհրդին, այլ միշտ լսիր քո չվհատող սրտիդ և առողջ մտքիդ ու դատողութեանդ. քո կեանքի ամեն մի վիճակի մէջ: Եւ ով որ ինքն իրան չէ կորցնում, նա բոլորովին կսրած չէ: Միշտ աշխատիր ինքդ քո խելքովդ ապրել ուրիշներից կախում չունենալով: Հաւատա՛ւ և յոյս ունեցիր որ լաւ՝ մինչև անգամ բաղդաւոր վիճակի մէջ կլինիս աւելի քո «Եպհայան»-ի քեզ, որ կբանեցնես, քան թէ ուրիշների տուած խորհրդին հետեւելով, և այն ժամանակ նեղ օրեր չես տեսնիլ: Մեն մի մարդ իւր սեպհական բաղդի արհեստագէտը պէտք է լինի՝ մի գարբնի նման, որ իւր արհեստի մէջ ունեցած հմտութիւնով սառն ու կոշտ երկաթից դարբնում, շինում է իւր մտքում դրած բանն ու լաւ գուրս բերում:

Բայց դու քո ուժերդ փորձել ես, ճանաչել ես, և գիտե՛ս թէ՛ մինչև որտեղ կհասնին: Ու քո ուժերդ ի՞նչ են որ: Քո ձեռք բերած հարստութիւնդ, քո ժառանգութիւնդ, որոյ վրայ յոյս ես կապել, քո ընտանեկան կապը է, մեծ անուն ու նշանակութիւն ունեցող մարդոց հետ ազգական լինելդ, քո սովորած յաջողակութիւններդ են, քո պաշտօնդ է, քո դիմքդ և ունեցած վիճակդ, — Աւա՛յ, դու սարսափելի կերպով խաբւում ես: Այս ամեն բանն այնպիսի մի բարիք է, որոյ վրայ յոյս դնել չէ կարելի, որովհետեւ՝ միշտ միզ չի մնալ: Եթէ որ քո բաղդաւորութիւնդ ու բարօրութիւնդ այս բաների վրայ ես հիմնում, իմացիր, որ փերուէն աւաղի վրայ ես շինում տունդ: Այնպիսի օրեր կան, որ քո հարստութիւնդ քեզ չի օգնիլ, ունեցած նեղութիւնիցդ քեզ ազատել չի կարողանալ. այնպիսի հանգամանքներ կան, որոնց մէջ քո ազգականներդ քեզանից երես շուռ կտան ու կհեռանան. այնպիսի անբաղդութիւն կայ, որից քեզ ամենեւին պաշտպանել չի կարող քո ու-

նեցած բարձր աստիճանդ, կամ դիրքդ, Փողը, բարեկամներն
և ունեցած բարձր աստիճաններդ ու արժանաւորութիւններդ
բոլորն էլ կարող են քեզ մատնել, այն ժամանակ լինէ կամայ
քեզ:

Լաւ ճանաչիր, որ քո ունեցած իսկական ոյժդ՝ նշխարաբանութեանդ,
առաքինութեանդ և աստուածալուծութեանդ մէջն է: Իմացիր, որ
այս երեք բանով դու կ'աղթես աշխարհին, այս երեք բանի
մէջն է քո հսկայական ոյժդ ու զօրութիւնդ: Բո խրաւարա-
նութեանդ անկախ պահիր քեզ, ոչ միայն օտարի օգնութեան ազդե-
ցութիւնից, այլ և քո ինչ ազդեցութեանց, այն՝ դեռ ևս վրադ
գտնուած, վրադ կ'աւազ սխալանքներից, որ քեզ քանի ու
քանի անախորժութիւններ պատճառեցին, Բո առաքինութեանդ
նախ քեզ զօրացուր ու տիրի բոլոր մոլորի ու սրտերի վրայ,
ինչու որ ամեն մի մարդ՝ կամայ ակամայ, մեծարանաց ու սիրոյ
հարկ է տալի առաքինութեան: Բո առաքինութեանդ
սրբ քեզ՝ քո երկնաւոր Հօրդ հաւատարիմ զաւակն:

Ինչու որ կարճամիտ է հողեղէն մարդս. մեծ խելքի Տէրն էլ
շատ անգամ սխալվում է: Թոյլ է հողեղէն մարդս. իւր ամե-
նալաւ առաքինութիւնն էլ շատ անգամ անհաստատ: Կայ
մի գերագոյն Զօրութիւն, Դա երբէք չի տատանուում. կայ մի
Գերագոյն Իմաստութիւն, որ երբէք չի սխալուում. մի հայրա-
կան սէր, որ երբէք չի մեռնում: — Ո՛վ քրիստոնեայ, քո նեղու-
թեանդ և ուրախութեանդ օրերումը վերեւ քցիր աչքդ դէպի
այդ անմահ ու յաւիտենական Սէրն: Երբ որ ամեն մարդ քեզ
թողնի, ամեն բանից զրկուես՝ այն տեղ վերեւումը կայ Մէկը,
նա քեզ երբէք չի թողնիլ, ոչ էլ անտես կանի: Աստուծոյ արած
գործը մարդուս մտածածից դէ՛նն է գնում: — Սրա համար
լաւ է Տիրոջը յուսալ, քան մարդոց ապաւինել:

Մարդս իւր նման սխալական մարդոց մէջ և իւր տկար ու-
ժերովը, բոլոր ստեղծուած արարածներիցն, ամենաթշուառնե-
րից մէկն անշուշտ կ'լինէր, եթէ որ ինքն իրա գլխին թողնուած
լինէր, և չհամարձակուէր աներկբայ հաւատով վերեւ մտիկ
տալ իւր Ատեղծողի՝ իր վրայ ունեցած խնամքին: Զուր տեղն է
պարծենում ըզրդաւոր մարդն և այնուէն կտրծում, որ ամեն

բան իւր սրամտութեան, իւր մեծ խելքի գործն է, ինչ որ իւր շուրջն արել է ու շինել. ինչու որ, կխփի ժամն, որ ամեն բան կքանդի, ամեն բանին ուրիշ կերպարանք կտայ: Ամենազօրաւոր աշխարհակալի սրտումն անգամ, այն աշխարհակալի, որոյ առաջ երկիրներ ու ազգեր են խոնարհում, նրա սիրտն անգամ դողում է իրանից Զօրաւորի առաջ, որ աստղերից բարձրումը իւր իշխանական աթոռի վրայ բազմած է, որ թագաւորի որպէս և ամենավերջին ստրուկի գլխին գալու անյայտ ու մութ բաները տնօրինում է:

Աստուծոյ արած փորձը հարդաւս հարաշաքիցը դէռն է անց կենում: Ինչպէս շատ անգամ մեր կեանքի մէջ մարդկային ջանքերի ոյրնչութիւնն, մեր մոռումը դրածոների սխալն ենք տեսել ու հասկացել: Աստուած՝ իւր արած մի գործովը մեզ հասել է, ու մեր արած հոգսերն որպէս և քաշած տրտմութիւնները զուր են դուրս եկել: Բայց միշտ աւելի լաւ բանի ենք արժանացել, քան թէ կարծում էինք: Ինչպէս քանի ու քանի հոգսեր ենք արել ու երկիւղ քաշել զուր տեղն, ինչպէս քանի ու քանի անգամ զուր տեղը լաց ենք եղել մեր սրտի ցաւիցն, երբոր նեղութեան ու ձախորդութեան մէջ ենք եղել: Տեսել ենք, որ մեր կրած երկիւղն աւելորդ էր՝ ու զուր տեղը մեր թափած արտասուքներն ոչ պէտք էին և ոչ էլ օգուտ ունէին. ինչու որ հասկացել ենք յետոյ, թէ Աստուած մեզ համար աւելի լաւ էր մտածում, քան թէ մենք ինքներս: Յետոյ միայն՝ և ուշ հասկացել ենք իւր իմաստուն տնօրէնութիւններն: Եւ այն, ինչ սր տեսել ու հասկացել ենք, երաշխաւորութիւն պիտի լինի մեզ համար այն բանին, ինչ որ այժմ հասկանալ գեռ ևս չենք կարող:

Վստահ լինինք երկնաւոր Հօր վրայ ու նրան յանձնուինք բոլորովին: Նրա համար քչ ու քաշի վայ, Նրա համար ամէն բան ներկայ ժամանակ է, և անվերջ ներկայ ժամանակն առաւում է յաւիտեականութիւն: Մարդուս գլխին գալիքը, պատահմունքների խաղը, հանգամանքների միասին գործելը, հազարաւոր տարիների և բոլէնների իրար վրայ ներգործութիւն ունենալն, ամենազօրաւոր ազգի և ամենատկար ծծկեր երեխայի վիճակը—միայն Իրան, այո՛, Իրան է միայն լուսի պէս պարզ ու յայտնի, ինչու

որ իւր կամքն է տեսնուում ամեն բանի մէջ:

Ուրեմն անի տկար ու կարճատես մարդու ձեռքիցն ի՞նչ կրգայ: Կարող է արդեօք նա իւր կեանքի վրայ աւելացնել մի բոպէի չափ ժամանակ:—Ի՞նչ են ձեր կարծուած երկրաւոր մեծերն, ի՞նչ են ձեր իշխանութիւն ունեցողներն ու զօրաւորներն Աստուծոյ առաջ: Հող ու մոխիր: Նրանք կարող են երկիւղ տալով, կամ խելք բանեցնելով, կամ բարութիւնով շարժել ազգերին անկենդան գործիքների նման: Նրանք կարող են փառաւոր քաղաքներ շինել, իրանցից յետոյ եկող մարդոց զարմանք պատճառող յուշարձաններ կանգնել—խոտի ամեն մի ծիր շատ տուելի զարմանալու բան է: քան թէ աշխարհիս գլխաւոր ճարտարութեան գործն: Կարող են իրանց միլիոնաւոր հպատակների վրայ ոյժ բանեցնել: Բայց ջրի ոչ մի ալիք չի հնազանդում նրանց, ոչ մի քամի չի լուում նրանց առաջն, ոչ մի հիւանդութիւն չի հեռանում նրանց հրամանի առաջ: Նրանք ենթակայ են մահուան իրանց ամենայեալին ստրկի նման:

Աստուած գիտէ լաւն, նա կարող է լաւն անել, կանխած էլ է միշտ մեր լաւը: Կայ մի մարդ, որ ասածիս վրայ կասկածի: Ո՛վ փոքրագի, մտիկ տուր երկնաւոր Տիրոջ վրայ, նա Քեզ սիրում է անփոփոխ սիրով: Նրանումը լուսի ու խաւարի փոփոխութիւն չկայ: Մի՞թէ նրա իշխանութեան տակը չէր՝ քեզ անկեանք ոյլնչութեան մէջ թողնելը, Դու երբէք չէիր լինիլ: Բայց նա կամեցաւ քեզ, նա կամեցաւ, որ դու էլ գտնուիս իւր անթիւ արարածների շարքում: Նա կամեցաւ քեզ էլ իւր հրաշքներովն երջանկացնել: Եւ դու աշխարհք եկար, դու կեանք ունիս, ապրում ես, դու ճանաչում ես նրան ու պնդում ես տալիս, դու փառաւորում ես նրա անդէն: Նա ուզում է քո Հայրդ լինել և դու պէտք է նրա զաւակը լինիս: Ուրեմն դէն քցիր քո անմաքուր ցանկութիւններդ, քո մշտական հոգսերդ ու տխրութիւններդ օրական հացի համար, արտաքին հանգամանքներիդ համար, քո գլխիդ եկածին՝ կամ նրանց գլխին եկածին համար, որ քո սրտիդ սիրելի են: Քցիր քո հոգսերդ, նրա վրայ, նա քեզ համար լաւ հոգս կանի:

Մի՛ երբէք չզգացած ուրախութիւնով լցուում եմ գլխիցս

մինչև ոտքս, վերև մտիկ տալով գէպի քեզ, ո՛վ յաւիտեանական
Հայր: Զգում եմ ու գիտեմ, որ Քո զաւակդ եմ: Հոգիների
Հայր: Քո կեանքդ է իմ և իմացնոց մէջ. մեր հոգիները Քեզ ու
Քո ճանապարհներդ այն ժամանակ լաւ կճանաչեն ու կհասկա-
նան, երբ որ արձակուելով երկրաւոր՝ հողեղէն կապերից, պարզ
և պայծառ տեսութեամբ ազատօրէն կարող են ամեն կողմից
մտիկ տալ ու հասկանալ թէ՛ իրանց և թէ՛ աշխարհքիս մէջ ե-
ղած կարգադրութիւնները:

Սրա համար ասում է Քո օտար խօսքը երկրիս վրայ ապրող
զաւակացդ բազմութեան. « Ես յեւ ո՛ւ ինքնեմ, ոչ հաւաքեմէս: Ե-
ւ յիպէս որ՝ մենք կարող ենք ասել. «Տէրն է իմ օգնական, ու իս-
կեմ լախեմալ. մարդս ի՞նչ կարող է ինչ անել»:

(Թարգմ.) Գ. Ե. Ա.

ՊԱՏՄԱԿԱՆ

ԵԱՐԱԳԻՐ Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՆՈՒՑ

ԵՒ

ՎԻՃԱԿԻ ՆՈՐԻՆ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՅ.

(Նարսիս-Բիւն)

Զ.

Հառան-խանը որպէս տգրուկ իւր հպատակ և մերձ ի սահ-
մանս իւր տաճկահայոց կարողութիւնն ու կեանքը ծծել է զկնի՝
1826ին՝ արշաւանք մը ալ գործեց ի ռուսապատկան դաւառս
ինչ, Շաքի, Շամախի և Ղարաբաղ...:

Նա իւր անյագ ծարաւը լցոյց յիշեալ դաւառաց բնակչաց
տրեամբ և հարստութեամբ, որ գիզեց և զբազումս սրով խող-
խողեց: առատաձեռն աւարաւ և քրիստոնեայ գերեօք ինչ
դարձաւ ընդ կրունկն:

Վասն որոյ ռուսք որ իրենց հպատակ անդաց բարեկեցութեան